Իրազեկվածություն ՏԻՄ-երի վերաբերյալ եվ մասնակցություն տեղական ինքնակառավարմանը. վստահությունը որպես միջանկյալ գործոն

Սոնյա ՄՍՐՅԱՆ

հետազոտող

CRRC-Armenia

info@crrc.am
(+374 10) 57 48 98, 57 48 68
1 Alex Manukyan Street, YSU Library building, 6th floor, room 602

Հետազոտության նպատակ և խնդիրներ

CRRC Armenia

- Ուսումնասիրության առաջնային նպատակն է պարզել, թե ինչպիսին է հասարակության կազմն ըստ երկու չափումների՝ ՏԻՄ նկատմամբ իրազեկվածության մակարդակ և մասնակցություն տեղական ինքնակառավարմանը:

- Հետազոտության երկրորդային նպատակն է պարզել, թե ինչպես են այս երկու գործոնները փոխկապված միմյանց, այն դեպքում երբ վստահության գործոնը դիտարկում ենք որպես միջանկյալ փոփոխական:

ՏԻՄ-երի նկատմամբ իրազեկվածության եվ ՏԻ-անը մասնակցության չափումը

CRRC Armenia

- Տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության ներկայացման համար ընտրվել է մեկ փոփոխական՝ «վերջին վեց ամիսների ընթացքում որքան հաճախ եք մասնակցել համայնքում ավագանու նիստերին»:

- ՏԻՄ նկատմամբ իրազեկվածության ինդեքսի կառուցման համար ագրեգացվել են երկու միջանկյալ բաղադրյալ համաթվեր, որոնցից յուրաքանչյուրում փոփոխականներն ագրեգացվել են ըստ բերված գործոնային ծանրաբեռվածությունների:

ՏԻՄ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՒՄԸ

CRRC Armenia

ՏԻՄ նկատմամբ իրազեկվածության վերջնական համաթիվը, որը տատանվում է [0 – 3.02] միջակայքում և ունի հետևյալ բնութագրիչները՝ միջին (2015թ.)=0.8988, ստանդարտ շեղում (2015թ.) = 0.6008, միջին (2019թ.)=1.0418, ստանդարտ շեղում (2019թ.) = 0.492



ՏԻՄ վերաբերյալ իրազեկվածության համաթվի պարամետրերը 2015 թվականի համար



ՏԻՄ վերաբերյալ իրազեկվածության համաթվի պարամետրերը 2019 թվականի համար

ԿԼԱՍՏԵՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

CRRC Armenia



Կլաստեր 1 - «Մեկուսացած քաղաքացիներ»- ունեն ՏԻՄ նկատմամբ ցածր գիտելիքներ և ցածր մասնակցություն տեղական ինքնակառավարմանը:

Կլաստեր 2 - «Ձևական մասնակցություն»- ունեն ՏԻՄ նկատմամբ ցածր իրազեկվածություն, սակայն նրանց մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը բարձր է:

Կլաստեր 3 - «Չիրացված գիտելիքներ» - ունեն ՏԻՄ նկատմամբ բարձր իրազեկվածություն, սակայն չեն մասնակցում տեղական ինքնակառավարման գործընթացներին:

Կլաստեր 4 - «Գիտակցված մասնակցություն» - ունեն բավարար գիտելիքներ տեղական ինքնակառավարման վերաբերյալ, և մասնակցում են այս գործընթացներին:

Կլաստերային վերլուծություն, 2015 թ.



Խմբերից ամենամեծը **«մեկուսացած քաղաքացիների»** խումբն է, որը կազմել է հարցվածների **57%-ը**:

Ըստ մեծության երկրորդ խումբը **«Չիրացված գիտելիքների»** խումբն է, որը կազմում է բնակչության **40.5%-ը**:

Բնակչության առավել փոքր խումբ կազմում են **«Գիտակցված մասնակցություն»** խումբը՝ բնակչության **2.4%-ը**:

Կլաստերային վերլուծություն, 2019 թ.



Առանձնացվել են ըստ մեծության երկու գրեթե հավասար խմբեր՝ **«Մեկուսացած քաղաքացիներ»**, որը կազմում է բնակչության **35.8%-ը** և **«բարելավված իրազեկվածություն»**, որը կազմում է բնակչության **36.8%-ը**:

Ըստ մեծության երրորդ խումբը **«Չիրացված գիտելիքների»** խումբն է, որը կազմում է բնակչության **25.6%-ը**:

Հարցվածների մեջ ամենափոքր խումբը կազմում է **«Գիտակցված մասնակցության»** խումբը՝ ընդամենը **1.8%**:

Մեդիացիոն վերլուծությունում կիրառված մոդելը և արդյունքները



Մեդիացիոն վերլուծությունում կիրառված մոդելը և արդյունքները

CRRC Armenia

Կիրառված մեդիացիոն վերլուծության արդյունքում ստացվել են վիճակագրորեն նշանակալի մոդելներ և՛ 2015 թվականի բազայի հիման վրա (Հավելված 1), և՛ 2019 (Հավելված 2) (p<0.000):

- ՏԻՄ նկատմամբ վստահության վրա ազդում է տեղական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ իրազեկվածությունը: 2019 թվականին (b=0.9351, s.e.= .0849, p<0.000,) 2015 թվականի համեմատ (b=1.418, s.e.=.0737, p<0.000) նվազել է ՏԻՄ վերաբերյալ իրազեկվածության ազդեցության չափը ՏԻՄ նկատմամբ վստահության վրա:

- ՏԻՄ վերաբերյալ իրազեկվածության և տեղական ինքնակառավարմանը մասնակցության միջև առկա է վիճակագրորեն նշանակալի դրական կապ, սակայն 2019 թվականին (b=0.1364, s.e.= .0177, p<0.000) 2015 թվականի համեմատ (b=0.2792, s.e.= .0231, p<0.000) այս կապը թուլացել է:

- ՏԻՄ նկատմամբ վստահության և տեղական ինքակառավարմանը մասնակցության մեջ հնարավոր չի եղել բացահայտել վիճակագրորեն նշանակալի կապեր ո՛չ 2015 թվականի բազայի հիման վրա (p=.6347), ո՛չ 2019 թվականի (p=.2671):

Առաջարկություններ

CRRC Armenia

Քաղաքականության առաջարկություններ՝

- Բարձրացնել ՏԻ ոլորտի վերաբերյալ իրազեկվածությունը **«մեկուսացած քաղաքացիների»** խմբի շրջանում, որը կազմում է բնակչության 35.8%-ը (2019 թ.):
- Իրականացնել ՏԻ-անը մասնակցության խթանման միջոցառումներ **«Չիրացված գիտելիքների»** խմբի շրջանում, որը կազմում է բնակչության 25.6%-ը (2019թ.):
- Իրականացվող իրազեկվածության միջոցառումներում ներդնել ՏԻ ոլորտի նկատմամբ բնակչության վստահության բարձրացմանը նպաստող բաղադրիչներ:

Առաջարկություններ

CRRC Armenia

Ոլորտային հետազոտողներին առաջարկվում է՝

- Ուսումնասիրել ՏԻ-անը բնակչության մասնակցության վրա ազդող գործոնները՝ կիրառելով բազմակի մեդիացիոն վերլուծության մոդելներ:
- Ուսումնասիրել ՏԻ-ան նկատմամբ բնակչության վստահությունը փոխպայմանավորող գործոնները՝ կիրառելով բազմակի մեդիացիոն վերլուծության մոդելներ:
- Որակական մեթոդների կիրառությամբ ուսումնասիրել, թե ինչպես և ինչ գործոններով են ՏԻ-ան վերաբերյալ իրազեկվածությունը փոխկապված ՏԻ-անը բնակչության մասնակցության հետ:

CRRC Armenia

Սույն հետազոտությունը կատարվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

CRRC Armenia

Շնորհակալություն